Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«20» օգոստոսի, 2024 թ. թիվ 200 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵԿԱՆԱՏԻ՝ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկանատը Կենտրոնին վերապահված մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթության մակարդակում և ուսուցման առկա և հեռակա ձևերով ուսումնական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովել է՝ համապատասխան ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգի, ինչպես նաև՝ դեկանատի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝

2023-2024 ուստարում դեկանատն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների պատշաճ անցկացման վերահսկում:
- Ըստ հաստատված դասացուցակների՝ լսարանների տրամադրում:
- Քննական ժամանակացույցների համաձայն՝ լսարանների տրամադրում, վերջնական տարբերակների նախապատրաստում և ներկայացում ուսումնական մաս՝ հաստատման, փոխանցում ՏՏ բաժին՝ տարածման:
- Ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի հաստատում:

- Ամբիոններում դասալսումների իրականացում, դասապրոցեսի մշտադիտարկում, հաճախումների մշտադիտարկում:
- Դասապրոցեսի մշտադիտարկում հեռավար հարթակում:
- Ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների հետ համագործակցություն, պարբերական հանդիպումների կազմակերպում:
- Սահմանված կարգով ուսանողներին կրթաթոշակ (այդ թվում նաև անվանական) նշանակելու, վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչման, ուսանողական նպաստների հատկացման աշխատանքների կազմակերպում և համակարգում:
- Սահմանված կարգով ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձի համար տարվող աշխատանքների համակարգում:
- Քաղաքացիաիրավական պայմանագրերով Կենտրոնում աշխատող դասախոսների աշխատավարձերի հաշվարկ և հաստատման ու վճարման ներկայացում:
- Մագիստրոսական թեզերի ղեկավարների, հանձնաժողովների անդամների վճարների հաշվարկ ըստ ամբիոնների և հաստատման ու վճարման ներկայացում:
- Միջամբիոնային համագործակցության և սեփական գործառույթներից բխող աշխատանքներ:
- Լավագույն բուհերի վարկանիշավորման աղյուսակներում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ներգրավվածության գործընթացն ապահովելու նպատակով տարվող աշխատանքների համակարգում:

Ըստ կիսամյակների՝ համակարգողներից հավաքագրվել, ուսումնական մաս հաստատման են ներկայացվել կիսամյակային դասացուցակները, այնուհետև փոխանցվել են ՏՏ բաժին՝ տարածման (հիմք՝ ցուցատախտակին փակցված դասացուցակներ, դրանց առկայությունը էլեկտրոնային դեկանատում և Կենտրոնի պաշտոնական կայքէջում):

Կիսամյակային եզրափակիչ քննությունները սկսվելուց առնվազն 7 օր առաջ համակարգողներից հավաքագրվել, հաստատման և տարածման են ներկայացվել քննական ժամանակացույցները (հիմք՝ Կենտրոնում՝ տեսանելի վայրում փակցված և Կենտրոնի պաշտոնական էլկայքում զետեղված ժամանակացույցներ):

Ըստ քննական ժամանակացույցների՝ հաստատվել են ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերն ու քննաթերթերը (հիմք՝ ամբիոններում ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի առկայությունը՝ ըստ համապատասխան կրթական ծրագրի):

Ելնելով դեկանատի կանոնակարգով սահմանված գործառույթներից, ինչպես նաև առաջնորդվելով տնօրենության՝ 03.10.2022 որոշումով, իրականացվել է 2023-2024 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակների հեռավար MOODLE հարթակում դասանյութերի տեղադրման գործընացների մշտադիտարկում՝ ըստ ամբիոնների: Մշտադիտարկումը հնարավորություն է տվել գնահատելու հեռավար հարթակը ներկայացված նվազագույն պահանջներով կահավորելու յուրաքանչյուր դասախոսի կատարած աշխատանքը: Դասընթացները, ըստ դասացուցակների, տեղադրվել են գնահատման համար ստեղծված համապատասխան ձևաթղթերում: Արդյունքները ուղարկվել են ամբիոնների վարիչներին, համակարգողներին, դեկանին և ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի պետին: Կատարվել է մշտադիտարկման արդյունքների վերլուծություն. համեմատվել են 2022-2023 և 2023-2024 ուստարիների 1-ին և 2-րդ կիսամյակներում դասավանդվող նույանուն այն դասընթացները, որոնց դասախոսները ևս նույնն են եղել (հիմք՝ մշտադիտարկման ձևաթղթեր և արդյունքների վերլուծություններ):

Հիմք ընդունելով Կենտրոնի գիտական խորհրդի կողմից 2018 թ. հոկտեմբերի 10-ին ընդունված ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասընթացների դասալսման ընթացակարգը, կազմակերպել և իրականացրել են 2023-2024 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ կրթական որոշ ծրագրերի դասալսումներ: Դրանք կազմակերպվել են ուսումնական մասի, որակի ապահովման բաժնի, ինչպես նաև ամբիոնների մասնագետների ներգրավմամբ (հիմք՝ դասալսումների արձանագրությունները):

Հանրային կապերի և կարիերայի բաժնի, ՈւԽ, ՈւԳԸ-ի հետ համատեղ կազմակերպվել են կուրսերի ավագների ժողովներ, հանդիպում-քննարկումներ, (հիմք՝ ժողովների, հանդիպում-քննարկումների արձանագրությունները):

Հավաքագրվել և Կենտրոնի ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և փոխատեղման մանդատային հանձնաժողովին են ներկայացվել ուսումնական նպաստներից օգտվող, անվանական կրթաթոշակի հավակնող և ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձից օգտվող ուսանողների տվյալները (հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և փոխատեղման մանդատային հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, ԿԳՄՍ նախարարություն ներկայացված ցուցակներ):

Կազմակերպվել են ԳԿՄԿ ամբիոնների վարիչների պարբերական հանդիպում-քննարկումներ, դրանք արձանագրվել են և ուղարկվել բոլոր ամբիոններին (հիմք՝ ժողովների արձանագրությունները):

Երկրորդ կիսամյակից սկսած ամսական պարբերականությամբ հաշվարկվել են քաղաքացիաիրավական պայմանագրերով Կենտրոնում աշխատող դասախոսների ամսական վճարման գումարները, դրանք ներկայացվել են հաստատման: Հաշվարկվել են մագիստրոսական թեզերի ղեկավարների, հանձնաժողովների անդամների վճարների չափերն ըստ ամբիոնների, ներկայացվել են հաստատման ու վճարման (հիմք՝ հաշվարկված և հաստատված ցուցակների առկայությունը հաշվապահությունում):

Լավագույն բուհերի վարկանիշավորման աղյուսակներում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ներգրավվածության գործընթացն ապահովելու նպատակով Կենտրոնի տվյալներն ուղարկվել են մի քանի վարկանիշավորման աղյուսակների, որոնցից մեկում Կենտրոնը ներառվել է չորրորդ հարյուրյակում (հիմք՝ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, վարկանիշավորման աղյուսակում Կենտրոնի առկայությունը):

Ուսումնական տարվա վերջում Մանդատային հանձնաժողովը քննել է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների ցուցակը՝ փոխատեղում իրականացնելու համար (հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի զեղչի) և փոխատեղման մանդատային հանձնաժողովի նիստերի արձանագրություններ):

Էրազմուս+ կարողությունների զարգացման ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում համակարգվել են համապատասխան աշխատանքները, որոնք վերաբերում էին Կենտրոնին, մշակվել են դոկտորական առարկայական ծրագրերը հայերեն և անգլերեն, կազմվել են ամփոփիչ հաշվետվությունը և ներկայացվել ծրագրի համակարգող բուհին (հիմք՝ ծրագրի էլկայքը, ծրագրի ամփոփիչ և ընթացիկ հաշվետվությունները, մշակված առարկայական ծրագրերի առկայությունը):

Դեկանատի կողմից իրականացված միջացառումները լուսաբանվել են, ապահովվել է հանրային հրապարակայնություն և թափանցիկություն (հիմք՝ Կենտրոնի էլկայք, սոցիալական ցանցերի էջեր, խմբեր):

Դեկան Ա. Մխիթարյան